

Պարսկաստան:

(Տես երես 81)

Իհնուց արևապաշտութիւնը Պարսից ընդհանուր կրօնքն էր: Ընդհանրապէս կը պաշտէին իբրև բարերար Լստուած մը որ կը բուսցընէր ամէն տեսակ ծառեր և բոյսեր և կը հասունցնէր ամենազգի պտուղներ: որով և երախտագիտութեամբ անոր ծագելու միջոց իրենց ընծաները կը նուիրէին և Սիհր աստուած կ'անուանէին: Ըսկէ մտաւ նաև կրակի պաշտօնն ալ որ արևու նմանութիւն մը և յատկութիւններն ունի, և երբոր թագաւորը տեղ մը երթալու ըլլար՝ միշտ առջևէն կը տարուէր մեծարանօք: Ըս կրակը մասնաւոր փութով մոգերը կը ջանային անշէջ պահելու, և թէ յանկարծ մարելու ըլլար՝ մեծամեծ դժբաղդութեանց գուշակ կը համարուէր:

Պարսկաստանի մէջ մասնաւոր մեհեաններ և բազիններ չկային ինչպէս որ կար ուրիշ հին ազգաց մէջ: որով հետև բացօթեայ տեղեր և լեռներու վրայ կը կատարէին իրենց զոհերը: բայց վերջէն Օրադաշտայ ձեռքով, որ մոգերուն կրօնքը նորոգեց, ատրուշաններ շինուեցան ուր մասնաւոր խնամքով կը պահպանուէր կրակը որ չմարի:

Ըսկէ զատ Պարսիկք ուրիշ երկու աստուածներ ալ ունէին բարւոյ և չարի, որոնց անունն էր Արմիզդ և Ըրհմն, որոնցմէ առաջինը բարւոյ և երկրորդը չարի խնամակալ կը համարուէր: Ընոր համար եթէ մէկուն բարիք ուզենային մաղթել՝ Արմիզդին կ'աղաչէին, իսկ թէ որ չարիք՝ Ըրհմնին: Պարսից այս հին կրօնքին վրայ տեղն 'ի տեղ կը խօսի մեր Լազնիկ վարդապետը, և անոնց անտեղութիւնն ալ ճարտար փիլիսոփայութեամբ կը ցուցընէ իր Եղծ աղանդոյ ոսկեղինիկ զբքին մէջ:

Ըս կրօնքը շատ դարեր տևեց Պարսկաստանի մէջ և մոգերուն սաստիկ նախանձայութեանէն դժուարին

եղաւ քրիստոնէութեան Պարսկաստանի մէջ զօրանալը: Բայց երբոր մահմետականութիւնը արևելքի մէջ զօրացաւ՝ Պարսկաստան ալ մտաւ հանդերձ քաղաքական մեծամեծ խռովութիւններով:

Պարսիկք մահմետականութեան Շէհադանդին կը հետևին, որ Ըսի Սահմէտի եղբորորդիէն առաջ կու գայ: ինչպէս տաճիկները Սիւննիի որ Ըսկուպէքի կարգէն կը ծագի, զոր Սահմէտ իրեն յաջորդ ընտրեւ էր: Ըս ետքիններս Սահմէտի երեք յաջորդներուն օրինաւոր յաջորդութիւնը կ'ընդունին, զորոնք Շէիններն կը մերժեն և զԸսին կը ճանչնան օրինաւոր յաջորդ: Սիւննան որ է երեք առջի ա միրապետներուն բերնէն անգիր աւանդութեանց ժողովածոյ մը, խաբէական բաներ կը սեպեն, և իրենք մեծ յարգութիւն և հաւատք կ'ընծայեն մէկ պզտի վարդապետական գրքի մը՝ զոր Խաւէ կը կոչեն: Վարձեալ այս երկու Շէի և Սիւննի աղանդներն քանի մը ծիսական խտրութիւններ ունին եթէ Խաւէ միջոց ձեռքերնին շարժելու և եթէ լուացուելու ատեն կատարելու մանր արարողութիւններնուն մէջ: Վարձեալ Սիւննիները ուխտագնացութեան կ'երթան Սէքէ, բայց Շէի հետևողներն անոր տեղ Ըսի, Հիւսէյին որդւոյն, և Բիզա իմամին գերեզմանները կ'երթան ուխտի: Սիւննի կրօնական հանդէսները կը կատարեն ինչ որ Սիւննիները: բայց ունին նաև իրենց յատուկ տօներ: Երեւելիներէն մէկն է Մուհարրէմ ամսոյն առջի տասն օրերը՝ որ Հիւսէյինի մեռնելուն յիշատակը կը տօնեն: Պարսիկք չափազանց աւելորդապաշտ են և ճակատագրի ալ դիւրահաւան, որ քան զամէն տեղէ աւելի հոն զօրացած է: Եթեմեծ կատարելութիւններ կ'ընծայեն Սահտիի, որ Ըսին սկսեալ երկոտասաներորդ Իման է: Պարսիկք անանկ կը հաւատան որ այս Սահտին դեռ մեռած չէ, այլ քաշուած առանձին տեղ մը, և դարձեալ պիտի յայտ-



Իմարն Պարսիկ :

նուի վերջին դատաստանին ժամանակները, երբոր Յիսուս երկնքէն իջնայ, և բոլոր աշխարհ մահմէտական դռնայ : Մահտիին այս բացակայութեան միջոց իրեն հոգևորական հեղինակութիւնը, կ'ըսեն, բաժնուած է սրբակաց անձինքներուն մէջ, և ժողովրդեան ազաւանքներն ալ կը բարձրանան Միւստէհէտին առջև : Պարս

սից կրօնական կղերը չորս Միւստէհէտ ունի, որոնց նաև ազատ իշխաններն ալ չեն համարձակիր անսաստել, և պարտական են նաև արտաքին նշաններով ալ պատուել զանոնք : Ըսոնք այնչափ զօրաւոր են որ Թագաւորին հրամաններն անգամ կրնան խափանել :

Պարսկաստանի մէջ Թագաւորու

Թեան յաջորդութիւնը մասնաւոր օրէնքով մը հաստատեալ չէ. անանկ որ ազատ իշխանութիւն ունի Թագաւորն իր ընտանեացմէ որ և իցէ անձ մը ընտրելու իրեն յաջորդ : (1) Թագաւորն իրեն իշխանութեամբը հանդերձ ծանր պարտաւորութիւններ ալ ունի, որոնք մեծաւ մասամբ իւրօրոսէն ի վեր անխախտ պահուած են. ասոնցմէ մէկն է նաև որ եթէ շահը հիւանդ չըլլայ և կամ որսի զբաղած, հարկադրուած է օրուան մէջ վեց ժամի չափ ժողովրդեան աղերսանաց և գանգատներուն մօտիկ դնելու :

Պարսից գրաւոր օրէնքները Պուրանին համեմատ գրուած են, նոյնպէս Սիւննայի՝ որ առաջին երեք խալիֆայից սկզբունքներն են. կան ալ որ ընդհանուր բնական սովորութեանց կը հետևին, որոնք ըստ այլ և այլ գաւառաց կը զանազանին : Սիւթտէհէտն ալ մեծ ազդեցութիւն ունի դատաստանական օրէնքներուն վրայ : Սեծաւ մեծ քաղաքներու մէջ Գապը մը կայ որ Հէյխիւսլամին համեմատ դատաստան կը կտրէ. մերձաւոր քաղաքներուն մէջ ինքնիշխան է, իսկ երկրորդական տեղերը Դաւայից ձեռքով կը կատարէ իր պաշտօնը : Ըստ օրինաց զրկեալ անձ մը կրնայ իր զրկողին յանցանքին ներել. ծանր գողութիւն ընողը ընդհանրապէս մահուան կը դատապարտեն. մարդասպան մը եթէ սպաննուողին ժառանգներուն ձեռքը իյնայ՝ կրնան անոնք ալ փոխարէն սպաննել զինքը : Իսկ Թեթև յանցանքներու պատիժներն են՝ գաւազանահարութիւն և խառաղանի հարուածներ :

Հաջը երկու պաշտօնատէրներ ունի իրեն օգնական, սրոնց մէկը՝ որ Վէշիւ կ'ըսուի, տէրութեան արտաքին գործողութեանց իննամբ կը տանի. իսկ երկրորդը Հազարապետ՝ որ ներքին բաները կը հոգայ : Տէրութեան մէջ գաւառներու կուսակալները ընտրելը շահին ձեռքն է, և ընդհանրապէս մեծամեծաց տներէն են, որոնք խան կ'ըսուին, անոնց տեղակալներն ալ Հաֆիճ :

Իսկ գիւղապետներն ալ Բէֆթապայ :

Պարսկաստանի մէջ ամէն տեսակ արուեստաւորը գլխաւոր մը ունին, որ պարտական է իրենց վաստակը հոգալու և իրաւունքնին պաշտպանելու :

Հարկերը ժողովելը արդարութեան պաշտօնեաներուն յանձնուած է. բոլոր երկրէն ժողոված հարկն է 75,000,000 Ֆրանք. ասոր մեծ մասը Թագաւորութեան ունեցած երկիրներէն և այլ և այլ կալուածներէն է, նոյնպէս վաճառականութեան վրայ դրուած տուրքերէ. բայց սովորականէ դուրս հարկերն աւելի յաճախ են և մեծագումար, որով գրեթէ կրկին կ'ըլլայ ընդհանուր հարկին հաշիւը :

Պարսից զինուորութիւնը շատ զօրաւոր կ'ըլլար եթէ ստէպ խռովութիւններ չպատահէին մէջերնին. և որովհետեւ եւրոպական կրթութիւններն ալ պակաս է դեռ, այն պատճառաւ շատ անգամ յաղթութիւնն ալ երկբայելի է. սոյն բանը կը հաստատեն նաև վերջի ժամանակներ Ռուսաց հետ ըրած պատերազմին : Զիաւոր զօրքը կտրիճ է և շատ յաջողակ սուրենի. զակ գործածելու, բայց հետեակը շատ տկար : Անոնաւոր զօրքը եթէ հետեւակ և եթէ ձիաւոր՝ աւելի նուազ է քան զանկանոն զինուորները, որոնք շատ անգամ արգելք են յաղթութեան քան Թէ նպաստիչ : Ընդհանրապէս 200,000 զօրք ունի ոտքի վրայ, բայց չզօրեր շատ անգամ ապստամբները նուաճելու, որոնք շատ գաւառներ կը զատեն իրմէ :

Հետեակ զօրաց զէնքերն են հրացան, սուր, ասպար. ձիաւորաց նիզակ, հրացանակ, և սուր :

Պարսիկները բնութեամբ ճարտար են և գործունեայ, մասնաւոր երկրագործութեան մէջ. բայց ընդհանրապէս երկիրը իրենց աշխատութեան համեմատ չփոխարիններ, որովհետեւ անբեր է : Եւս անբերութիւնը ամէն տեղ ալ հաւասար չէ. ինչպէս, Եթրպէ ճան և Սաղանդարան նահանգները լաւ ուտաբեր են և ջրաւետ : Երկին



Թնդանօրաձիգ զօրակալն :

Քը պարզ և անամպ ըլլալուն պատճառաւ, սաստիկ տաք կ'ընէ, և տաքէն ետեւ յանկարծ սաստիկ ձմեռ վրայ կը հասնի, ձմեռունէ ետեւ ալ յանկարծ տաք. անոր համար երկիր մշակելն ալ դժուարին է, առանց մասնաւոր ջրադարձներով գուբերու մէջ ջուր պատրաստ ունենալու: Երկրին մեծ մասը կաւային է, հիւսիսային կողմը խոնաւ ըլլալուն պատճառաւ աւելի բարեբեր է, իսկ հարաւային կողմը սաստիկ տաք է. լիճերն աղի են, որոնք մեծաւ մասամբ ամառնային տաքէն չորնալով՝ առատ աղ կը ձգեն յատակներնուն վրայ:

Պարսկաստանի մէջ գտնուած ընտանի կենդանիներն են ձի, եղն, ուղտ, էշ, ոչխար և այլն: Եղները ընդհան-

րապէս երկիր հերկելու կը գործածեն, ուղտերը աւազուտ երկիրները ճամբորդութիւն ընելու, պատերազմի մէջ ալ մինչև փոքրիկ թնդանօթներ կրելու տան անոնց: Ուր տեղ որ արևուն տաքութիւնը սաստիկ է հոն ջուրին կը գործածեն, որ տոկուն և ուժով է. էշերը ինչպէս ամէն տեղ, հասարակ ժողովրդեան աշխատութեանց կ'օգնեն բեռներ կրելով. տեսակ մըն ալ էշ կայ որ աւելի բարձր և աշխոյժ է քան զսովորականը և հեծնելու կը գործածուի: Պարսկաստանի ձիերը միջահասակ են, ուժով, տոկուն աշխատութեան, և վազուկ. ոտքերնին նուրբ և ջղուտ է, վզերնին կարճ և մեղ: Պարսկաստան կը գտնուին արաբացի ձիեր ալ, բայց սաստիկ սուղ ըլլալուն պատճառաւ

միայն մեծամեծաց քով կը գտնուին։ Պարսկաստանի ընտիր ձիերն են Խուրասանի ձիերը, մեծղի և ուժեղ քան զամէնը, որոնք կանոնաւոր զօրաց կը գործածուին։

Վայրի կենդանիներէն կը գտնուին Պարսկաստանի մէջ, առիւծ, վագր, ընձառիւծ, գայլ, իշաւայրի, առն, վիթ, բորենի, շնագայլ, աղուէս, ցուլ, կապիկ. օձ ալ շատ կը գտնուի երկրին սաստիկ տաքութեան պատճառաւ, բայց թուռաւոր տեսակները քիչ են։ Լըկիրին մեծ վնաս հասցընողներն են մարախը, սարգի տեսակ մը որ քարանդակ կ'ըսուի, կարիճ և ճերմակ մըջիւն։

Լըկիրը ինքնին որչափ որ ալ բարեբեր չէ՝ բայց ջանքով շատ տեսակ պտուղներ կը հասցընէ. ինչպէս նաև խաւարտ, մեկոն, արմաւ, ծաղիկներ, վարդ, ծարիր, կանեփ, խաշնդեղ, ընգոյզ որ ծացուցիչ, մատուտակ, խէժ դառն, խունկ, սուսամ, ծխախոտ, քրքում, տորոն, բամբակ, շաքարի եղէգն, խաւող, չամիչ. որոնցմով մեծաւ մասամբ կ'ընէ իրեն վաճառականութիւնը ուրիշ երկիրներու հետ. և Պարսկաստանէ դուրս ելած վաճառքներն են, մետաքս, գիտոր, ասր, մարգարիտ, շաւ, վարդաջուր, դէմպէքի, ծխախոտ, գրչի եղէգ, քրքում, ընկոյզ, որիզ, գաւազան ծխաձիգ, կապերտ, ափիոն, շաքար։

Կը շարունակուի։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊՕԼՍՈՅ

(Տես երես 75)

ԳԼՈՒԽ Դ

Արեւելեան կայսերութեան վիճակն Յուստինոսէն մինչև Եսթինէի մահը։

Անաստասայ մահուրէն ետև բազմաթիւ կուսակցութիւնք երևան ելան. և որովհետև Լնաստաս իրեն յաջորդ

մը չէր որոշած, անոր համար իւրաքանչիւր կուսակցութիւն իր գլխաւորը կ'ուզէր որ կայսր ըլլայ։ Լնասոս ներքինին՝ որ արքունեաց հազարապետն էր, արծաթոյ մեծամեծ գումարներ տուաւ Յուստինոսի, որ պահապան զօրաց գլխաւորն էր, որպէս զի զանոնք զօրաց բաժնէ և անոր եղբորորդին (Թէոկիր) տոսը կայսր դնել տայ։ Յուստինոս բաժնեց զայն իր անուամբը, և այսպէս զօրքը շահեցաւ, որ զինքը կայսր ա. նուանեցին նոյն իսկ Լնաստասայ Թադման օրը։

Լնս Յուստինոսի վարքը ամբողջ վիպասանութիւն մըն է պատմութեան մէջ, ինչպէս վիպասանական է նոյն իսկ Կոստանդնուպոլսոյ պատմութիւնը։ Յուստինոս Թրակիոյ Բեբերիանա քաղաքը ծնած էր, ու տղայութեան ժամանակն ոչխար արածելով անցուցած էր, վերջը աղքատութեան պատճառաւ հայրենիքէն ելաւ և ոտքով եկաւ Կոստանդնուպոլիս, յամին 470. անոք և անօգնական, և բոլոր յոյսը ապագային վրայ դրած էր, ինչպէս ամէն բաղձախնդիր մարդիկ՝ զորոնք բաղձը փառաւոր աստիճաններ կը հանէ։ Լնս կայսրն, որ իրեն հայրենակիցն էր, տեսնելով անոր դէմքին գեղեցկութիւնը և հերակլեան ոյժն, իր թիկնապահ զօրաց մէջ դրաւ զինքն. այս հովիւ երիտասարդը Պարսից և Խաւրացոց դէմ մեծամեծ քաջութիւններ ցըցուց։ Լնս զինքը զօրավար անուանեց, և իր յաջորդն Լնաստաս սինկղիտոսի պատուանունը տուաւ անոր, և իր թիկնապահ զօրացը գլուխ դրաւ զինքը։

Յուստինոս կին ունէր իր գերուհին, որ կ'ըսուէր Լուպիկինա. այս անունը փոխեց ու Լուփիմիա դնել տուաւ. քովը կանչեց բոլոր իր ազգականները, որոնց մէջն էր նաև Յուստինիանոս, որ Կոստանդնուպոլսոյ պատմութեան մէջ ընդարձակ էջեր պիտի բռնէ։ Զուգեց ոչ կարդալ սորվիլ և ոչ գրել. փայտէ պնակիտներու վրայ իր անունը կազմող տառերը փորուած էին, և